առագաստ մտնելու։ Այս նուիրատուութիւնը կոչւում է ընդան ըացէք, որով փեսան կարծես գնում է աղջկայ կուսութիւնն և իրաւունքը նրա հետ խօսելու, այսինքն նրա անձին տիրելու իրաւունքը, որովհետև սովորութեան համեմատ փեսան ու հարսնացուն նշանադրութիւնից սկսած մինչև այդ գիշերը իրար հետ չեն խօսում։

Փեսայի ու սրա ազգականների կողմից հարսնացուին նուիրատուութիւն անելու այս տեսակ սովորութիւնը խիստ ընդհանրական բնաւորութիւն է կրում և գրեթէ բոլոր ազգութիւնների սովորութական իրաւունքի մէջ կարելի է գտնել։ Շատ բնորոշ էր այդ սովորութիւնը հին հռովմէական իրաւունքի մէջ, ուր յայտնի էր donatio ante (prorter) nuptias անունով, որ կընշանակէ ընծայաբերութիւն ամուսնութիւնից առաջ (ամուսնութեան պատճառով)։ Մինչդեռ հռովմէական իրաւունքով խստիւ արգելւում էր ամուսնացած ժամանակը որևէ ընծայաբերութիւն անել կնոջը, որպէսզի վերջինս սիրոյ պատրուակով չը-հարստահարէր ամուսնուն, ընդհակառակը նուիրատուութիւններ անել իւր հարսնացուին նախ քան պսակը թոյլատրւում էր զուտ անտեսական շարժառիթներից։ Այս դէպքում օրէնքը պաշտպանում էր մի հայեացք, այն է՝ կինն ապագայում, ապահարզանի կամ մարդուց զրկուելու ժամանակը, ունենայ իւր անձնական մի սեփականութիւն՝ peculium, որը բաղկացած էր միմիայն dos-ից՝ օժիտից, ու յիշեալ նուիրատուութիւններից և որի վրայ ամուսինը սեփականութեան ոչ մի իրաւունք չունէր։ Ակներև է, որ այդ donatio-ն, որ հոմանիշ է հայկական «երեսաց տեսոյին», մի մնացորդ է գնման սովորութեան՝ coemptio-յի։ Այդ donatio-ն իւր իրաւաբանական հետեւանքներով, antiferna-յի (նուիրատուութիւններից կազմուած գումարը) նշանակութեամբ պարփակում է իւր մէջ գնման պրոցէսսի գաղափարը, որ ժամանակի ընթացքում զարգանալով, կորցրել էր իւր սկզբնական բնաւորութիւնը։

Նոյն հետևանքները նկատելի են նաև հայկական սո-

Հայ մատենագրության թուանշային գրադարան